

ԹԵՈՒԱԹԻ ԱՊՈՍՏՈՐԱՆԸ

(Ազատ փոխադրութիւն)

ԻՄ հայրենիքը իսպառ մոռացած,
Ծով արցունքներով աչքերս լցուած,
Բիւր վշտեր դարսած կրծքիս ցաւազար՝
Այսպէս ոտք դրայ ապիրատ աշխարհ...
Ոչինչ համարած պատկառ ամօթի՝
Մերկ, կիսահեծան, ծարաւ, անօթի՝
Ման եկայ գտնել բաղդիս բնակարան,
Ոչ որ չըկարաց ցոյց տալ ինձ ճամպան.
Երկար բաղիւնցի դուռը իմ բաղդի,
Բայց չ'արժանացայ գէթ մի «լումայի»:
Աշխատանքի մէջ ես տեսայ տանջանք,
Ոչ, ծանլը թուաց ինձ այդպիսի կեանք...
Բաղիւնցի ամրոց, ուր «փառքն» է ապրում,
— «Հեռի, — ասեցին, — քեզ չենք ճանաչում.»
Բաղիւնցի անթիւ կողպած դարբաններ՝
Լսեցի միջից դառն կատակներ...
Անգո՛ւթ էր բաղդը.... Նա ինձ չը ծպտաց,
Իմ ճակատագիրը ոչ ոք չը կարդաց.
Այժմ մի հատիկ «տուն» է մնացել,
Նրբան տակաւին ես չեմ մոռացել:
Քայլերս իսկոյն այն կողմն ուղղեցի,
Անպարեցի ես շուտով այն տեղ.
Նրբա դըռնակն էլ բաղիւն փորձեցի,
Որպէս զի գտնեմ վերքերիս մի դեղ....
Բայց այնտեղ ո՛րքան անխուղ էր քուն,
Մոռացայ կրած ցաւերըս անհուն.
Ու այնուհետեւ «վտից» ազատուած՝
Թեքեցի այնտեղ զլուխ վատտակած...
«Ապաստարանս էր այն նեղ Գերեզման»,
Ուր քրոջսաները միայն «հանգիստ» կան...

Գրիգոր Բալասանյան

ՔՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

ՁԵՅԹՈՒՆՑԻ ԱՒԱՆԴԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԸ

ԱՅՍ աշխատութիւնը համեմատութիւն մըն է Չէյրունցի աշակերտական պատմութեան մը և Եղիստացոց Համալսիկիտոս քաղաքի պատմութեան, զոր Հերոդոտոս մէջ կը բերէ: Չէյրունցոց պատմութիւնը առնուած է Պր. Յ. Յ. Ալլահպէրտեանի 1885 թուին Պոլիս հրատարակած ՈՒՆԻԱ կամ ՋԵՅԹՈՒՆ ընտիր աշխատութիւնէն (տես էջ 152—159), միայն շատ փոքր փոփոխութիւն մը մտցնելով: Չէյրունցի արտասանութեան մէջ ր տառը յ կը հնչուի. Ալլահպէրտեան զայն ր պահած է, իսկ այս աշխատութեան մէջ դրուած է միշտ յ: Դիտարեան համար անեցոյցած է նաեւ գրական լեզուով քարգմանութիւնը և բաժնուած է հատուածներու:

Երկու պատմութիւններն իրարու հետ քացորդապէս նոյն են. տարբերութիւնները կը կայանան ինչ ինչ երկրորդական կետերու մէջ՝ որոնք յարմարցուած են տեղական պարագաներու: Չէյրունցոց պատմութեան գլխաւոր տարբերութիւնն այն է՝ որ ասուց պատմութեան քէ՛ սկզբն և քէ վերջը քննութիւն մը անեցոյցած են՝ որ կը բռնէ մեր Ա, Բ, Գ և Դ հատուածները. այս մասերը կը պակսին Հերոդոտոսի մէջ. նա միայն մեր Ե հատուածն ունի:

Երկու պատմութիւններուն համեմատութիւնը հայ բանասիրութեան և գաւառաջնւնութեան համար օգտակար նիւթ մըն է. մանաւանդ որ այդ պատմութիւնը կայ նաեւ ուրիշ երոսկական ազգերու մէջ ևս առանց քարքար:

ՀՐԱԶԵԱՅ Ց. ԱՅԵՆԻՍ